


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամակն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԻՆԵՐ	
Տարեկան ծրամակն	20
Վեցամսեայ »	12

E. TOROSSIAN
Direc.- propr. du journal arménien
ARCHAËOÛICE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆՈՒԿ
Եւ թղթատարի ծախքը
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղութեամբ
գրութիւնք էս էն տրուի :

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելու են

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն
կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԻ տարւոյ բա-
ժանորդագիրը որկեղ Տնօրինութեան հաս-
ցէին :

ԱՐՏԱՍՏՀՄԱՆԻ Պատ. բաժանորդներէն
այ ջեռնապէս կը խնդրուի, որ բարեհաճին
նախորդ տարիէն մնացեալ պատուագ կցե-
լով որկեղ նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԻ Տարեշրջա-
նի բաժանորդագիրը, եւ հարկ չը քողոյ
մասնաւոր դիմումներու, որով ընդ
ուարարիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ
տարիէն բազմազարայ Տնօրինութեան :

ՈՌՈՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

« Օրենսդրական ժողովածուի
մէջ հրատարակուած է կառավար-
չական մի կարգադրութիւն, որով
Թիֆլիսի Հրատարակչական Ընկե-
րութիւնը փակվում է » :

ՄՇԱԿ

Բուպական զայրոյթի ու անմխիթար
ցաւի խառնուրդ մը կ'ողողէ սիրող վերո-
յիշեալ տողերը կարգալով. զգացումնե-
րու ըմբոստացումը իր գաղաթնակէտին կը
հասնի, և իրականութեան ճնշող ծանրու-
թիւնը արհամարող մանուկ խանդավառու-
թիւնը ուժգնօրէն կը բողբէ այդ բռնա-
բարոյն դէմ :

Կը բողբէ՞ : Բայց կապարի ծանրու-
թիւնը և պողպատի տոկոսնութիւնը ունե-
ցող կառավարչական այդ կարգադրութիւ-
նը, այդ անիրաւ, անխիղճ, ճիւղալին
կարգադրութիւնը վայրկենապէս կը ջլատէ
կամբը, խանդը, եռանդը և սե ու դա-
ժան իրականութիւնը հոգիդ կը փուչփուչէ :

Չայրոյթը բոցն է որ կը բռնկի կը բո-
ցավառի ու կանցնի. ցաւն է որ կը մնայ,
մնայուն է ան ինչպէս մոխիրը. բոցին, հըր-
դեհին, աւերակներուն մոխիրը :

Լուսատու աստղ մըն ալ կը մարի Ռու-
սահայոց երկինքէն, Հրատարակչական Ըն-
կերութեան փակումով :

Մեր Ազգ. ծխական դպրոցները ան-
պատկառօրէն իւրացնելէ վերջ, Ռուսիան
կը հետամտի Հայ ազգին ներքին ու ինք-

նուրոյն զարգացումին աստարող միջոցներն
ալ, կամաց կամաց՝ բայց ապահովաբար
մէջ տեղէն վերցնել :

« Նոր կարգադրութեան համաձայն, կը
գրէր անցեալները Արեւելի մէջ Կովկաս-
եան թղթակցութիւն մը, Պաքուի Հայոց
Մարդասիրական Ընկերութեան գործունե-
ութիւնը սահմանափակվում է Պաքու քա-
ղաքի շրջանով միայն » :

Թերեւս ըլլան այնպիսիներ որոնք մի-
ամտօրէն հարցնեն. — Լա՛ւ. բայց ի՞նչ
կ'ուզէր Ռուսիան Ընկերութեանէ մը, որուն
նպատակ և պաշտօնն է հաց տալ աղքատ-
ներուն, օգնութիւն հասցնել թշուառնե-
րուն, որոնք զուրկ են ապրելու միջոցներէ :

Ինչպէս յայտնի է Պաքուի Հայոց Մար-
դասիրականը՝ Պաքու քաղաքին աղքատնե-
րուն օգնելով չէր բաւականանար միայն .
ան, ուրիշ մի քանի քաղաքներու և գիւ-
ղերու մէջ իւր ճիւղերն ունէր. հիմա Ռու-
սիա այդ ճիւղերն է որ կը կտրէ : Ուրիշ
օր մըն ալ, իրեն համար սիրուն մեզի հա-
մար տխուր օր մը, անշուշտ, « Կառավա-
րական մի ուրիշ կարգադրութիւն » ով նոյն
Ընկերութեան Մայր — Արմատն ալ պիտի
կտրէ :

Բայց դարձեալ նոյն հարցումը. ինչո՞ւ.
Ռուսիոյ պէս սկզբունքով բռնակալ
երկրի մը մէջ ո՛ր է ընկերութեան մը, ըլ-
լայ այն մարդասիրական. գրական. գիտա-
կան. գեղարուեստական, հազիւ թէ կը
ներուի ապրիլ — եթէ Կառավարչական վե-
րին հսկողութիւն մը չի վայելէ — մանա-
կանդ երբ այդ ընկերութիւնը ըլլայ հպա-
տակ ազգի մը : Ընկերութիւնները, դա-
սակարգերու և գաղափարներու միութեան
կապերն են. անոնք կը նպաստեն համայն-
քին գիտակցութեան զարգացումին : Բայց
Ռուսիան, արդարութեան սկզբունքի սի-
րո՞յն համար խաղաղութեան համաժողովը
գումարող հովանաւորող Ռուսիան, ժողո-
վրդին գիտակցութիւնն է որ խափանել
կուզէ. դասակարգերու և գաղափարներու
կապն է, որ կտրել, խորտակել կուզէ :
Այսպէս Թիֆլիզի Հայոց Հրատարակչական
Ընկերութիւնը, ազգային լեզուն, զգա-
ցումը, գիտակցութիւնը զարգացնելու,
վառ պահելու կը ծառայէր. բայց Ռուսի-
ան, արեւելի Մարտիրոս ժողովուրդնե-
րուն պաշտպան Ռուսիան՝ այդ լեզուն այդ
զգացումն է, որ խեղդել մեռցնել կ'ուզէ :

Մեծ հարուած մըն է Ռուսահայերուն
համար Հրատարակչական Ընկերութեան

խափանումը : Ռուսական Կառավարութիւ-
նը ատով խոշոր քայլ մըն ալ առած եղաւ
իր հրէշային ծրագրին — Ռուսացնել — յա-
շտոյթեան համար : Սպասենք ու հետե-
ւինք իր ապագայ քայլերուն, որոնք աւե-
լի մեծ դժբաղդութիւններ պիտի բերեն
մեր գլխուն . . . :

Մեր ցաւը անհուն և վիշտը անսահման
է. ծունկուրնիս ծեծելով չէ՛ անշուշտ,
որ լաւագոյն օրերու սպասելու իրաւունքը
պիտի ունենանք, դէթ իրականութեան
առջև անտարբեր չի մնանք ու մտածենք .
. . . :

Ձակագիր Ը . ՀԱՃԸՆԼԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ ՑՈՒՑԱՀԱՆԳԻՏ

... Խմբագրութիւն
ԱՐՇԱՆՈՅՍ Լրագրի

Աստ

Ձեր թերթին 117 թուոյն մէջ « Հայկական
խնդիր ծուցահանդէսին մէջ » վերնագրով եւ Մ.
Ս. Դաւիթ Բէկ ստորագրութեամբ յօդուած մը
կարդացի, որու պարունակութիւնը այնպէս մը
կը ցուցնէ որ, թուի թէ Մեծ Տէրութիւնը իրենց
կողմանէ լիազօր փոխանորդներ կարգած են այն
500-600 կարծեցեալ ժողովականները, որք ըստ
սովորութեան այլ եւ այլ քաղաքացի մանուաւնդ
Եւրոպայի մէջ ժողովրդական գումարում մը ե-
ղած ատեն 500-600 եւ մինչեւ իսկ քանի մը հա-
զարներ կը գումարուին եւ մեծ բազմութիւն մը
կը կազմեն, որք սակայն ինքնեկ բազմութիւն
մը ըլլալէ աւելի բան մը չեն արժեր :

Եթէ տաճկաստանի տօնավաճառները միտ-
քդ բերեն, ըսածս շատ լաւ կը հասկնաս :

Ասանկ կարգ կը մարդիկ խաղաղութեան
Համաժողով անուան տակ կը ժողովուին, կը
վիճարանին, նիւթ ունենալով հայկական խն-
դիրը, զոր հետաւտե անձինք կը հասկնան թէ՛
խնդիրը ո՛չ թէ հայկական, այլ զուտ տաճկա-
կան է. վասն զի ո՛ր տաճիկը որ այս խնդրոյն
վրայ կը խօսի, Հայոց ինքնօրինութեան կը
հակառակի, եւ չուզեր որ Հայք տաճկաց ոտ-
քին տակէն հետանան, այլ բարեկարգմամբ,
այսինքն տաճկաց ներքին կառավարական վար-
չութեան ուղղութիւն մը տալով՝ տաճկաց վե-
ճակը բարեօրէնու աշխատին : Դի՛մ ալ անոնց
համար մեռնին, ջարդ ու բուրդ ըլլան : Որով-
հետեւ Մուհամմէտէն սահմանուած են տաճկաց
ոտքին փոշին սրբելու եւ պէտք է սրբեն, վասն
զի սուրբ հաւատքին տէրը ասանկ կը հրամայէ :

Բայց երկու փարայի խելք ունեցող մը կը
խորհի թէ մինչեւ այսօր « Ժժժժ թուրք անուան
տակ ո՛ր է թիւրք մը հինգ փարայի գործ չի
տեսնալէ զատ՝ ապիկար մարդիկ կամ ըստ ա-
ռածին « հազար եէյիճիներ » թողլով հայրենիք-
նին, եւ իրենց կրօնական եւ քաղաքական իւ-

խանութեան անկումն մօտ գահը մերժելով, ըսկ- սան հետզհետէ փախչել՝ ազատ երկիրներ, եւ բաւական ժամանակէ ի վեր ալ փակեր են հա- յու պոչին, որ հայկական արեամբ շարախեալ է:

Ասկէ առաջ եւրոպական քաղաքաց մէջ երբ Հայկական խնդրոյն համար ժողովներ ըլլա- յին. կը տեսնայինք որ, կարգ մը պերճախօս հայեր բեմերէ պատգամ կ'որոտային, եւ լրա- գիրներու մէջ յօդուածներ կը հրատարակէին, այս անգամ չի հասկցուեցաւ թէ՛ ո՛ւր մնաց այն ազգային ետանդն ու ոգին. ո՛ւր մնաց այն անդուստի հայրենասիրութիւնն, որ գրեթէ մա- սով համրուելու չափ հայոց սրտին մէջ երբեմն հրաբուխներ կը կազմէին, եւ կը պայթէին. իսկ հիմա կերեւի թէ Զաքարիայի հետ սերտ խնա- մութիւն ունեցան, եւ ձայներն չ'ըսուեցաւ. ինչպէս նաեւ ՄՇԱԿի ազգասուէր Խմբագրինե- րէն Պ. Համբարձում Առաքելեանի ձայնը, որ տեղեկագրով մը նախաձեռնութիւն ունեցած էր եւ զոր ընթերցած էր ժողովին համարատուն(հար- ցուցէ՛ք, զինքը ո՛վ համարատու կարգեց) նէ- վիքոֆ, յետոյ օտարագրեք, եւ Օհաննէսեան խօսեցան. ի՞նչ խօսեցան, ի՞նչ էր փաստերնին իրենցմէ զատ ոչ ոք չի պիտէր:

Ատոնց մէջ Ահմէտ Ռիզա մը կը գտնուի, որ յաղթանակը կը տանի. ցաւալին այն է որ, այս քողարկեալ յաղթութեան աւետիսը սուղը դժբաղդաբար հայ մ'է եւ ըստ մեզ բարի հայ մը. այս ինքնակոչ ժողովը, որ Տէրութեանց եւ գոնէ հայոց կողմէն պաշտօնական չէ, մեզ կը հար- կազրէ քանի մը դիտողութիւն ընելու:

Ա. Չնք հասկնար թէ Ահմէտ Ռիզա ո՛վ է եւ ի՞նչ գործ ունի Հայոց խնդրոյն մէջ, եւ ինչո՞ւ չէ ուզեր որ Հայոց խնդիրը Կրեմլի պէս կամ նմանօրինակ Վարչութեան մը վերածուի՝ վաճառի իւր հօրմէն մնացած ծովկերեայ ա- պարանք մ'է այն, որ դարնան պիտի երթայ եւ հոն նստի. ուստի չուզեր որ սրուի կ'երե- լի թէ լուսամտի ժողովականներն ալ հասանե- լով այս իրաւաստութեան, ալլը փուլլու յաղ- թանակ մը չինէր, եւ Ահմէտ Ռիզայի՞ ձեռքը տուեր են, որն որ ուղղակի Սուլթանին պիտի տանի: Մեզի պէս յիմարի ձեռքով, ո՛րպիսի յա- ջողուածք:

Բ. Ահմէտ Ռիզա տաճիկ մը ըլլալով, ինչ իրաւունք ունի հայոց բաղդը որոշուելուն մէջ կարծիք յայտնելու եւ քուէ տալու, առանկ ծիծաղելի դերասանութիւն տեսնուած է երբէք:

Քուէն Ազգ. իրաւունք մ'է. պազարը ծախուած փրասա չէ, որ ուղղը ուղածին չափ աւնէ եւ գործածէ. թող Ահմէտ Ռիզա գոնէ շաքաթ մը առաջ մկրտուէր եւ Օհաննէս դաւ- նար, այն ատեն ըսելիքնիս տարբեր պիտի ըլլար:

Ահմէտ Ռիզա տաճիկ մ'է. թող փոխանակ Պոլսէն փախչելու (հայու մը հին կոչի՞ն ալ չէր արժէր) տաճիկաբար կեղբորնին մէջ կե- նար, եւ ժէճն թիւրքերուն դատը պաշտպանէր անոնց սիրտ տար, քաջալիբէր, եւ անոնց ցը- ցունէր փրկութեան ճամբան, որ դժբաղդաբար կորսուած կերելի. բայց սա ըսէ թէ, մածու- նով եւ փիլաւով մեծցող փափկասուն մը կուզէ՞ մեռնիլ, հոս է զիւրցաղնութիւնը եւ հայրենասի- րութիւնը:

Ո՞վ է Ահմէտ Ռիզան. թերեւս իւր կրօնա- կան սկզբամբ բարի տաճիկ մը եղած ըլլալ, ինչպէս ամեն ազգի անհատ իւր ազգին համար պարտի բարի անհատ մ'ըլլալ. բայց ոչ տաճիկ պէս անողոք եւ արիւնաբար. . . : Ինչպէս ե- ղան հայոցս համար:

(Շարունակելի) Ս. Ֆ.

ԱՂՕՏ ԼՈՅՍ ՄԷ

(Շարն. տե՛ս 116 117 եւ 118)

Գ. Ընդհ. ժողովոյ արամսդրութենէն օդ- տուելով ու անժամեայ մայր-դիւանին հաճոյա- կատարութենէն չփոցած՝ Տիար Փափազեան՝ իր յաւակնութիւնն ա՛յն աստիճան առաջ կը տանի

որ ինք, չ'ըլլալով իսկ պարզ անգամ մ'ընկե- րութեան, յանուն վարչութեան, զոր ինք կը ներկայացնէ բանիւ ու գործով, պարսաւանքի քուէ կը մտրա ընդհ. ժողովէն, որ... մերժեց այդ խնդիրը:

10. Մայր-դիւանը, ընկերակցութեամբ Տիար Ս. Փափազեանի, Ընդհ. ժողովոյ Սեպ- 23 ի նստին մէջ, կը բռնանայ խմբագրապետին վրայ, կրկնելով ու երեքնելով թղթատարու- թեան նախապատուի բանալին յանձնուելու պնդումը. իսկ խմբագրապետը, բանալին կը յանձնէ ընդհ. ժողովոյ կամքով:

11. Սեպտ. 25 ին երեքշաբթի, Տիար Ս. Փափազեան, ընկերակցութեամբ անժամեայ դի- ւանին, ի ներկայութեան Տիար Արմենակ Փա- փազեանի (բուն լսարան ընկերութեան, որ ի Պազար Մուրուր, Գործ. ժողովոյ Գանձապետ Մ. Խ.) եւ դարբնի մը ձեռքով, ի բացակա- յութեան խմբագրապետին, բունի բանալի կու- տայ գրասեղանը, ուր կը գտնուին խմբագրա- պետին անձնական բոլոր գրութիւնները, կեղ. կրթարարին պաշտօնական կնիքն, - ինչ որ կը հաստատէ Նոր Օրի մէջ քանիցս յայտարարուած ազգը- նաեւ գործ. ժողովոյ կնիքը եւլն. կը բռնաբարուի ամեն բան. եւ այս յանուն վար- չութեան մը, որ գոյութիւն չ'ունի, եւ աջակցու- թեամբ մայր դիւանին, որ հլու գործիք կամ գրող թիւագրողը դարձած է քարտուղար-ներ- կայացուցչին:

12. Յաջորդ օրը՝ խմբագրապետը Տ. Ե. Գարագաշի ընկերակցութեամբ կը դիմէ Աւագ- եան զեղարանը, ուր կը գտնուին ծանօթ երեք ամբաստանախններ իրենց համարն Պ. Նազա- րէթ ազգարմանի հետ եւ կը հարցնէ թէ՛ իրօք գրաւած են իր գոյքերը. մայր դիւանը լուս կը մնայ. Տ. փափազեան կը պատասխանէ թէ՛ այդ սենեակը վարչութեան է, հետեւաբար խմ- բագրապետը բան մը չունի հոն. մինչդեռ, ինչ որ անկարօտ է ապացոյցի, ձեռ առնու կը խոս- տովանի եղիլութիւնն ու այսօր ձեռ միջոցաւ եւ դարձուած են իմ ձեռագիրներս ու գոյքերս:

13. Տիար Կ. Չոլազեանի եւ Գարագաշի ընկերակցութեամբ գործ. ժողովոյ Ատենապետը կը դիմէ Ապախի Տպարանին շէնքը, պահանջելու համար իր եւ գործ. ժողովոյ գոյքերը, հոն, Տիար Զ. Պէրպէրեան կ'ուրանայ ամեն բան. եւ թ. փափազեան. եղբայրը քարտու- ղար-ներկայացուցչին, կը խոստովանի եւ կը յայտարարէ թէ՛ գրասեղանը բանալ տուողը իր եղբայրն է. յետոյ, թ. փափազեան եւ Յ. սարայտարեան, բնականաբար բարձրագոյն հը- բանագիր մը ուժով, թափով մը կը յարձակին գործ. ժողովոյ ատենապետին վրայ եւ կը փոր- ձեն ի զուր դուրս հանել զայն շէնքէն. այս անարգանքին վրայ գործադիր ժողովոյ ատենա- պետը կը դիմէ կատակարութեան մինչդեռ Նոր Օր ի թիւ 34 ին մէջ՝ չեմ գիտեր ինչ մտածու- մով հրապարակային սուտ մը կը գլտորուի թէ՛ (Մ. Խ. պատճառը փնտաելու հարկ չ'կայ. ար- գէն Նոր Օրը առաջին թիւէն սկսած սուտերով շարունակ է եւ պէտք չէ զարմանալ երբ արդի վարչիչները միեւնոյն ուղղութիւնը նախամեծար համարած են. . .) վարչութիւնը որոշած է դի- միլ դատային իշխանութեանց. բան մը՝ որ հակադարձօրէն պէտք է ըմբռնել. որովհետեւ եւ եմ դիմողը դատային իշխանութեանց իմ անձնական իրաւունքներուս համար:

14. Նոր Օրի թիւ 34ի մէջ ուրիշ խոշոր սուտ մը գետեղուած է. այս է թէ՛ արտասա- մանէն հետզհետէ հասած թղթակցութիւնները կը ծանրացնեն վիճակս. խնդրեմ թող մէջտեղ հանեն այդ թղթակցութիւնները:

15. Տիար Ս. փափազեան եւ ընկերութիւն կը զրպարտեն զիս իբրև թէ՛ գրած ըլլամ արտա- սանման ու կովկաս, Նոր Օրի բաժանորդներուն մերժել տալու գիտումով թիրթ մը, որու հիմ- նադրը ըլլալու գոհունակութիւնս չեմ կրնար ծածկել: (ա՛րդեօք. ' . ')

Ս. ԲԻՒՐԱՏ

(Մնացեալը յաջորդով)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

-o-

ՏՕԲԹԷՕՐ Յ. Նէվրոնի Զ ի քաղաքս ժա- մանումը մեծաւ ուրախութեամբ կը տեղե- կանանք:

Համբաւաւոր Տօքթօրը՝ երկարաշար տարիներ Եւրոպական մայրաքաղաքներու եւ մասնաւորապէս Բարիդի հիւանդանոցնե- րու մէջ իր արհեստը ամենայն յաջողու- թեամբ եւ օգտակարապէս ի դործ դնելէ, եւ մանաւանդ վերջերս ալ Բարիդի Միջազգա- յին բժշկական Համաժողովին մասնակցելէն ետքը, Գահիրէ եկած եւ առժամապէս Օ- թէլ Գօնթիւնանթալ Հաստատուած է:

Կը յուսանք թէ մեր ազգայինները պիտի նախնորեն համացեղ բժիշկներուն ինամբը եւ հողատարութիւնը, եւ պիտի օգտուին մասնաւանդ Տր. Նէվրոնի նման աղնիւ եւ փորձառու բժիշկի մը ներկայու- թենէն:

Արեւելի 4 Հոկտ. Չորեքշաբթի օր- ուան թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք.

Անցեալ երկուշաբթի, Հոկտեմբեր 2)15 Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Գահիրէցի ծանօթ վա- ճառական Բ. Նահապետեան էֆէնտի աղ- կան Օրիորդ Էօփէնի Բ. Նահապետեանի պսակաբութեան հանդէսն ընդ Յովհան- նէս էֆէնտի Աւալէմճեանի: Եկեղեցին լեցուած էր երկու կողմի ազգականներէն եւ բարեկամներէն կազմուած խումն բաղ- մութեամբ մը: Պսակի արարողութիւնը կատարեց Բերայի Աւագերեց Տ. Մկրեան հայրը, Նախագահութեամբ Երեցեան Տէր Գէորդ Սրբազանի:

Պսակի արարողութենէն վերջ ընդու- նելութիւն կատարուեցաւ Աւալէմճեանց Պէշիկթաշի բնակարանին մէջ ուր ամեն բան պատրաստուած էր ճաշարանապետ Մկրտիչ էֆ. Թոքատլեանի հողածութեամբ: Ի- ըրիկուան ճաշէն ետքը, երկու ամուսնիքը շոգեկառքով Եւրոպա ուղեւորեցան իրենց մեղրալուսինը անցնելու: Երկուքն ալ ծա- նօթ են իրենց բարեմասնութիւններով եւ յարգուած ամենէն:

Բ. Նահապետեան էֆ. ևս այսօր ըն- տանեօք Եգիպտոս կը վերադառնայ:

Գ. Վ. ՏԻԳՐԱՆ ԲԱՇԱ Ապրո որ օ- դափովութեան համար Եւրոպա կը գտնուէր երէկ քաղաքս ժամանեց:

ՄԱՀՄԱՆՏ ԲԱՇԱ Տամատ երեկ Աղէք- սանդրիաէն Գահիրէ հասաւ:

ԿիՉի կենդանաբանական պարտէզին բնակչաց թիւը շատ ու շատ աւելցաւ: Այժմ հոն կը գտնուի 169 տեսակ 670 կենդանի. մինչդեռ անցած տարի 131 տե- սակ 473 անասուն եւ 1898 ին 98 տեսակ 270 անասուններ միայն կային: Նորեկնե- րուն մէջ կան քիչ մը ընտանեցածներ ու- ընոնց վրայ այցելուներ (մանաւանդ մեկնե- լու վրայ եղող. . . այցելուները) կրնան հիծնել. մեծերը երկու եւ փոքրները մէկ դահեկան վճարելով:

Խ Ա Ռ Ն Լ Ր Ի Ր Ե Ր

ԱՄԵՐԻԿԱՅԻ Պ. Ռօքֆէլլէր, որուն ա- մենօրեայ եկամուտը 35,000 ոսկիէն աւե- լի է, կը նախանձի ամենայնոսին գործա-

ւորներու վրայ, վասն զի ինք չ'կրնար ուտել (աղքատներուն թող բաժնէ) ո՛չ իւզ ո՛չ միս, ո՛չ խմորեղէն, ո՛չ թարմ և ճերմակ հաց, իր ստամոքսին տկարութեան պատճառաւ ։ Կ'ըսուի թէ պատրաստ է իր հարստութեան 95 առ հարիւրը նուիրելու իրեն նոր ստամոքս մը տուողին ։

ԱՄԵՐԻԿԱՅԻ մէջ պատահած սոսկալի միջոցներու մասին տեղեկութիւններ տրւած էինք ընթերցողաց ։ Նոր հասած թերթերէն կը տեղեկանանք որ այն փոթորիկներէն ետքը Գոլօրատո անուն գետն ալ յորդելով քաղաքներ և բազմաթիւ գիւղեր ողողեց և շատ զոհեր ըրաւ ։ Նմանապէս ֆրանսայի հարաւակողմը, Իտալիա և Սպանիա ողողումներ մեծ կորուստ պատճառեցին ։

Դարձեալ յԱւստրիա սաստիկ փոթորիկներ պտուղները աւերեցին, անտառները արմատախիլ ըրին, հոյակապ տունները քանդեցին, և գուրսը մնացած անձերէն շատերը երեսուն մեթր բարձրութեամբ գէպի յօգ հանեցին ։

ԼՈՆՏՈՆԻ մէջ անգլուհեաց կողմէն շուներու ցուցահանդէս մը տեղի ունեցաւ ։ Շուններուն թիւն էր 6000, և տրուած մըրցանակներու և վարձատրութիւններու գումարը կը հասնի 220,000 ֆրանքի ։

Երջանիկ անգլուհիներ . դուք այնչափ ձեր շուներով զբաղած էք որ մաւցած էք Եգիպտոսէն ալ նմոյշ մը առնել ։ Գոնէ սա այն առաւելութիւնը կ'ունենար որ իր անխնայ հալուածներով և վայրենայ բաւովը թերեւս առաջին մրցանակը վաստկէր .

... բայց գժբազդ էք քանի որ ձեր ցուցահանդէսը զրկուեցաւ այսպիսի ... շունէ մը որուն հետ տեսակի զանազանութիւններ ալ գտնելու մեծ յոյս կար դոյնդոյն պոչերով ... թերի՞ ցուցահանդէս ...

Կ. ՊՈԼՍԷՆ կը հաղորդուի .
Ռուսական դեսպանատան և Բ. Դրան մէջ կարգադրուեցաւ որ Ռուսիա թրքական սահմանագլխին վրայ զինուորական բազմաթիւ պահականոցներ պիտի հաստատէ սահմանագլխի դէպքերուն այլ ևս տեղի չի մնալու համար ։

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Այլի Տիկին Ալանի Ս . Բիւշիւքեան . Տիար Յովսէփ Բիւշիւքեան . Տէր և Տիկին Ե . Թորոսեան . Տիարք Եղբարք Ք . և Տ . Յովակիմեան . Տիար Մ . Թորոսեան իրենց և յանուն իրենց Պոլսաբնակ ազգականաց, ԱՐՇԱԼՈՅՍԻ միջոցաւ խորին շնորհակալեք կը յայտնեն ամեն անոնց, որոնք Կիրակի օր, 21 Հոկտեմբեր 1900, բարեհաճեցան ներկայ գտնուիլ

Տ . ՍԵՆԵՔԵՐԻՍ ՔԻՒՉԻՔԵԱՆԻ

յուզարկաւորութեան հանգիսին և իրենց ցաւակցական արտայայտութիւնը ներկայացընել հանգուցելոյն կողակցին, որդւոյն, աղջկան, փեսին և ազգականներուն ։

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տնօրէնը իր մասնաւոր շնորհակալեք կը յայտնէ ծերունազարդ Տ . Ս . Ֆէլէկեանի որ իր հին բարեկամի գերեզմանին վրայ համառօտ բայց սրտառու զամբանական մը խօսեցաւ ։

Նոյնպէս շնորհակալեք կը յայտնէ ամեն անոնց, որոնք այցեքարտով և նամակաւ իրենց մխիթարականներն ուղղած էին իւր աներոյ մահուան առթիւ ։

ՍՈՒԼԹԱՆԸ ԺԷՕՆ—ԹՈՒՐԿԵՐՈՒՆ ՀԵՏ

— 0 —

Կերեւայ թէ Սուլթանը երիտասարդ—թուրքերու գոյութեանը վրայ կասկածելու կ'սկսի ։ Այս մասին կարծիքը հարցուց Հալէպի նախկին վալի Ռաիֆ բաշան, որ շնորհազուրկ ըլլալով պաշտօնանկ եղած և Պալիս կանչուած էր . և որ հիմա դարձեալ վստահութիւն կը վայելէ ։ Ռաիֆ բաշան ալ կը կարծէ որ երիտասարդ—թուրքերը գոյութիւն չ'ունին, և Սուլթան այս ինքըրոյն վրայ տեղեկագիր մը ուղեց բաշայէն ։

Ըստ Ռաիֆ բաշայի գոյութեան զուրկ է երիտասարդ—թուրք ըսուած մարմին մը ։ Միայն « դժգոհներ » կան ինչպէս ամբողջ աշխարհի մէջ կը գտնուի, և իբրև ապացոյց՝ յառաջ կը բերէ թէ՛ ամեն անգամ որ այն անձինք գոհացում ստացան, պատուանշանով կամ պաշտօնով, վերստին ամենախոնարհ ծառաները կ'ըլլային թէ՛ Սուլթանին և թէ՛ կառավարութեան ։ Եթէ յերաւի այսպէս է, Սուլթանը այլ ևս չ'պիտի խոշտանգէ այն ինքնակոչ երիտասարդ—թուրքերը, որոնք՝ կուսակցութիւն մը կազմելու անկարող ըլլալով՝ երկիւղալի հանգամանք չ'ունին ։ Ռաիֆ բաշային վայելած վստահութիւնը, և իրեն յանձնուած պաշտօնը մտահոգութիւն կը պատճառեն պալատին մակարոյծներուն, որոնք կը շահագործեն այն վախը, զոր երիտասարդ—թուրքերու գոյութիւնը կը ներշնչէ Սուլթանին ։

Ի Բ Ն Ա Տ Ի Ո Ս . Ս Ա Ր Ա Ս Ե Ա Ն

Գ Ե Ր Չ Ա Կ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պայ — էր — Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր, հանրածանօթ Անգլիացի վաճառական—գերձակ ժՕՆ ԲՕԼԱԲՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ և փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրաբի դիմացը, նորաչէն խանութիւնըն մէջ ։

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախորդք ըստ ամենայնի գոհ պիտի մնան, արհեստի նրբութիւն տեսնելով, նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով, և մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր և ճաշակաւոր զգեստներ ունենալով ։

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիկ 23 Հոկտ . — Յրանսա 3800 հոգիէ բաղկացեալ նոր շոկատ մը կը զրկէ Չինաստան, հարաւային նահանգներուն հաւանական ապստամբութիւնը նկատի ունենալով ։

Լոնտոն 23 Հոկտ . — Պ . Բրիւկէր Պըրուքսելէն պիտի անցնի առանց կենալու . ստոյգ է նաև որ Վիլհէլմին թագուհին (Հօլանտայի) անպաշտօն ունկնդրութեան մը միայն պիտի ընդունի զայն ։ Սըր Ռ . Պըլլըր Գէյթթաուն հասաւ, և վաղը կը մեկնի ։

Պէրլին 23 Հոկտ . — Պարոն տը Ռիսթօֆէն արտաքին գործոց նախարար անուանուեցաւ ։

Նիւ-Եօրք 23 Հոկտ . « Յորսթ Նէշլերը Պանք » ի Գանձապետը Ալլըրտ անյայտացաւ 140,000 ոսկւոյ բաց մը ձգելով ։

Այս փոքրիկ գումարին համար այսչափ արմուկ հանելու պէտքը կա՞ր ։ Ըսէ՛ք կալաչեմ . եթէ քառասուն ոսկի ըլլար գոնէ արժէք մը ունի կ'ըսուէր ։

Վ Ր Ի Պ Ա Կ

ԱՐՇԱԼՈՅՍԻ 118 թուոյն Խմբագրականը 117 թուոյն Խմբագրականին շարունակութիւնն է ։

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ի Դ Ա Շ Ե Ն

ԹՐԱՆՍՎԱԼ ։ — Լորտ Ռօպըրթս ի զուրկը յայտարարէ թէ Թրանսվալը և Օրանժը կցուած են անգլիոյ . թէ՛ խաղաղած է երկիրը . թէ՛ պօէրական ամեն դիմագրութիւն ընալինը եղած է . ի զուրկը յայտարարէ թէ՛ զէնք կրել շարունակողները ապստամբ պիտի համարուին և հրացանի պիտի բռնուին . Թրանսվալցի և Օրանժցի քաղերը կը շարունակեն դարձեալ կուռիլ և լեռներու և մէկ քանի գիւղերու մէջ կը ծածանեցնեն դարձեալ իրենց անկախ Հասարակապետութեանց սիրական դրօշակներ ։

Ամեն օր նոր հեռագիրներ կուգան, որք Պօէրներու երբեմն բաւական կարեւոր յոյժութիւնները ցոյց կուտան, քիչ չ'են կառախումբերը գծէն հանելու փորձերը, շոկատներ գերի վարելու դէպքերը և ամենահետաքրքրականը՝ մեծկակ քաղաքներ վերստին գրաւելու յաջողութիւնները ։

Ամենավերջին հեռագիրը սապէս կ'ըսէ . « Չոկատ մը որ Բար—Բիվրի անցքին մօտ գծէն հանուած կառախումբի մը օգնութեան զրկուած էր, Պօէրներէն լարուած թակարթի մը մէջ ինկաւ ։ Ռայֆլ Պրիկէյտէն Հարիւրապետ Սթէվարթ և 5 զինուոր սպաննուեցան, հարիւրապետ Բէյքըթ, երկու ուրիշ սպաներ և քսան հոգի գերի բռնուեցան ։

Հակառակ ծանուցումին թէ՛ Սպարապետ Պօթա և իր երկրորդը Վիլհօէն զօրավարը Բօրթուկալի սահմանը անցեր և զէնքերը ըլլալով Լօրէնցօ—Մարգէլ զրկուեր են, Պօէր սպարապետը իր երկրորդին հետ 2000 Պօէրի գլուխ անցած բաւական թընդանօթներով Բիլկրմա Հիլ գացած է ուրկէց Ձառութեանսպէրկի լեռները պիտի անցնի, հոնկէց շարունակելու համար իր Հայրենիքին տնկախութեան կուռիլ ։ Կարգաւորեալ պատերազմներու ժամանակը անցած է ալ . հայդուկալի կուռիներով է որ Պօէրները պիտի ջանան դիմագրաւել Անգլիոյ ։

Մինչ Անգլիոյ մարաշխաւը փայլուն զօրահանդէս մը անցնել կուտար ի Գօնաթի—բօրթ Բօրթուկալի թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ, Պօէրները Օրան-

Ժի մէջ Լինտիի մօտերը գործողութիւն մը կը կատարեն որ բաւական կարեւոր է :

Տիրպանէն եկած հեռագիրը սապէս կ'ըսէ . « Կամաւորներէ ընկերացած պաշար տանող կառախուժք մը երկուշաբթի Եակէր-սի հունէն վեց մղոն անդին յարձակում կը րեց Պօէրներէն : Անգղիացի սպայ մը և 4 զօրք վիրաւորուած են . երկու սպայ գերի բռնուած և բազմաթիւ պաշարաբարձ կառ-քեր շնչուած են » :

Իսկ նախալի Հիւսիսակողմը էրազմուս Հրամանատարը որ նեղը ինկած էր , զինա-դադար կը խնդրէ Անգլիացի Զօրավարէն պայմանաւ որ եթէ հաստատուի Պօէրներուն Բօմաթի Բօրթի մօտ ջախջախումը ինքն ալ անձատուր ըլլայ և այսպէսով իր ամբողջ հօտերը ապահովաբար Բիթէրսպուրի լեռ-նադաշտը հասցնելէ յետոյ , Անգլիացի Զօրավարին քիչին ինչալով կ'աներևութա-նայ : Անգղիական թերթերը ալ նախատա-կան մակդիրներ չ'մնաց որ չ'թափէին այդ-խեղճ խարուած զօրավարին և սպաներուն վրայ :

Ու քանի որ դեռ Պօթա և Վիլիօն Հօրավարները բաւական ահագեցելի բա-նակ մը ունին Թրանսօվալի անառիկ լեռ-ներուն մէջ , քանի որ Տըլարէյ Զօրավա-րը դեռ կը շարունակէ Անգլիացուց քիչին տակ գործել , քանի որ անմահ Տը Ուէթը իր ամբողջ բանակը ապահովաբար Թրանս-վալ հասցուց հարիւրապատիկ անգլիացի զօրաց հետ կռուելով և անգլիոյ էն նշա-նաւոր զօրավարներէն խուսափելով և ապա վերստին Օրանթ դարձաւ փոքրաթիւ զօր-քով դարձեալ գործելու համար , քանի որ դեռ Կրօպլարներ , էրազմուսներ , Լէմ-մէրներ և դեռ այնչափ անձանթ ժողովր-դական հերոսներ կան , Անգղիա հեռու է երկու ականջի վրայ հանդարտ քուն մը քաշելէ :

Թրանսօվալ և Օրանթ դադարած չեն Հասարակապետութիւններ ըլլալէ . Օրան-Ժի նախադահը դեռ երկրին մէջ է . Իսկ Գրիւկէր իր փոխանորդը Շալք-Պիւրկըր Զօրավարը ձգելով պիտի Եւրոպայ ճամբոր-դէ :

Հոկտեմբեր 19 ին Կէրօնիս նաւով մեկնած է արդէն . գալով արտաքին գործոց քարտուղար Պ . Ռէյցին , որուն Բօրթու-կալեան սահմանագլխէն անցնելը ծանուց-ուած էր , կ'իմացուի թէ ինք և իր երեք զաւակները հակառակ իրենց աստիճանին , Պօթայի բանակը մտած են իբր պարզ զին-ուոր և որոշած են ց'մահ կուրիլ :

Մեծ նախատինք պիտի ըլլայ Եւրո-պային , եթէ ասանկ արի ժողովուրդ մը իր անկախութիւնը կորսնցունէ

ԼԵՒՈՆ

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

903	3120	3333	6684	117	532
1946	2064	2084	3990	4286	4371
4616	4717	4958	5847	5898	6012
6080	6214	6242	6347	6407	7317
7400	7893	7911	8313	8808	8909

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ

Օսեանի ղեկարանին ղիսնացի փողոցի մէջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Երչարտերականներ, Գիւրտեր, Հրաւիրագրեր, Մահազրկեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ վաճա-ռականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագնութիւն և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷՔՔ ՈՒՍԱՆԻԼ

—o—

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ , կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճա-ռատուն մը բանալու գրամագլուխ և մի-անգամայն քիչ ատենի մէջ արհեստը ու-սանելու փափաքը ունենայ :

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բա-նակցել , անոնք որ հետամուտ են :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

—

Նոր Կեանք ի եւ Անահիտ ի Անթրի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք ա-ռիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբա-գրատունս գիւմեն , դիւրագին զայն գնե-լու :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1900

8908	9581	2420	5364	25	203
1762	2154	2596	2810	3013	3552
3576	3538	4048	4767	4553	4653
5054	6743	8246	8375	8425	8701
	9094	9253	9895		

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇՆԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱՎՈՒԻ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ո՞ր և է ընկերութեան մէջ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷԲ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՆ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ , կոթէն լարող սիրուն ժամացոյց-ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ա՛նկ տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչ-պէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օք-սիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօլի բազ-մազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յար-մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գօ-նօկրայիններու :

ԱԶԴ

Քղիի Օրօր գիւղի Ազգայիններէն Տիւր Մարտիրոս Շանօեանի որդի Պ . Կարապետ Շանօեան 26 ամեայ Երիտասարդը Հայա-լին՝ դէպքերէն ի վեր անհետացած է և իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն գիտնալ թէ ո՞ր կը գտնուի այդ Երիտա-սարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ . Ազգա-յիններէն որ եթէ գիտեն յիշեալ Երիտա-սարդին ուր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է տեղեկութիւն ունին անոր մասին , բարե-հաճին ծանուցանել Առշաղոյս ի Տնօրինու-թեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասուհ-մանի Պատուարժան պաշտօնակիցներէն , որ շնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկ-նել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նը-մանօրինակ ծառայութիւններ սպասելով մեզմէ :

Ա . ՊԱԼԵԱՆ

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻԶ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-ներու աջակցութեամբ եռաձայն և քառու-ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյէն գնել փափաքողներն կամ բաժանորդսօր-ուիլ ուզողներն, կրնան գիւմել՝ Առշաղոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր — Տնօ-րէնին :

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇՆԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱՎՈՒԻ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ ո՞ր և է ըն-կերութեան աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապու-րակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-կատար յԱզգ.բանագրիւս :